

# ՀԱՉԱԿ

## ՀԱՆԴԻՍ ՏԱՄՆՈՐԵԱՅ

Գ. ՏԱՐԻ

ՀԱՅԱԳ Ե. 1888 ՅՈՒՆՎԱՐ 20 ՊԵՏ 9

### ԱՉԳ ԱՅԻՆ

— o —

ՎԵՐԱՇԽՆՈՒԹԻՒՆ ԱՉԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

Քաղաքական ժողովոյ հրաւերին համեմատ, Ազգային  
Վարչութեան անցեալ Ուրբաթ աւուր նստին ներկայացան  
Հիւանդանոցի հոգաբարձութեան Մեծ. Առենապետն և  
անդամք, — Միքայէլ էֆէնտի Յակոբեան. Տիգրան է-  
ֆէնտի Կիւմիւշկէրտան, Պատրիկ էֆէնտի Կիւլպէնկեան և  
Յովակիմ էֆէնտի Ֆէնէրճեան:

Քաղաքական ժողովոյ Ատենապետ Վաեմ. Սիմոն Պէյ,  
որ ամեն ժամանակ ազգային նաւը ալեկօծութիւննէրէ և  
ժայռերուն զարնուելով՝ ընկղմելու վտանգէն աղատելու  
կոչումն ունի, յայտարարեց թէ՝ երբեմն հիւանդանոցի մա-  
տակարարութիւնն Ազգ. Վարչութեանց բոլոր մտազգաղ-

ման առարկայ էր, և իւր յարուցած դժուարութիւնք արգելք եղած էին ազգային գործոց բարւոք վարչութեան . բայց ութիւնն տարիներէ ի վեր, չնորհիւ արդի հոգաբարձութեան աշալուրջ և անձնուէր հոգածութեան, մեծ բեռ մը վերցած է Ազգ. Վարչութեան վրայէն. զի Հիւանդանոցի մատակարարութիւնն այլ ևս հոգ չի պատճառեր Վարչութեան: Հետևապէս, Ն. Վաեմութեան առաջարկութեամբ, Վարչութեան անդամք յունկայս չնորհակալութիւն յայտնեցին Հիւանդանոցի հոգաբարձութեան, ազգային այս կարեոր հաստատութեան բարւոք անտեսութեան համար:

Ապա Հիւանդանոցի վերաշինութեան վրայ խօսուելով Հոգաբարձութեան մատուցած ծրագրէն և յատակաձեւերէն երևցաւ թէ վերաշինութեան ծախքն, որ առաջ 38,000 սոկի կը հաշուուէր, 28,000ի գեղչուած է յատակաձեւոյն գեղչմամբ, և թէ այս գումարէն իբր 18,000 սոկի ապահովուած է: Հոգաբարձութիւնը կը ծանուցանէր թէ ամենալաւ յատակաձեւն ունենալու համար ազգային և օտարազգի հինգ-վեց ճարտարապետներու հետ խորհրդակցած է, բայց կը յայտարարէր թէ վերջնական յատակաձեւ մը ընդունելու պատասխանատուութիւնն Վարչութեան կը թողուր:

Վաեմ. Սիմոն պէյ պատասխանեց թէ քանի որ լաւագոյն յատակաձեւն ունենալու համար Հոգաբարձութիւնն ամեն ճիգ թափած է, և քանի որ Ազգին վայելուչ նոր հիւանդանոց մը կառուցանելու դործն իւր բոլոր մտադրութեան առարկայ ըրած է, Հոգաբարձութեան ընդունած յատակաձեւն Ազգ. Վարչութեան համար ևս ընդունելի է, և թէ անոր պատասխանատուութիւնը Վարչութիւնը սիրայօժար կ'ստանձնէ ամենայն վստահութեամբ . Ն. Վաեմութիւն յարեց թէ Վարչութիւնը բոլոր ովին պատրաստ է ամեն կարելի միջոցներով օդնել՝ Հոգաբարձութեան՝

այս կարեոր վերաշնութիւնն օր առաջ ի գլուխ հանելու համար :

Հնչակ.— Արիմելէքեան քնով խորդացող անտարբեր բայց կարող ազգայնոց ումանց ականջին ուժգնութեամբ կը հնչեցնենք այս տողերը, կրկնելով որ՝ արդի հոգաբարձութեան իրաւամբ տրուած բարերար տիտղոսը, մեծ պարագայից մէջ վեհ զգացումներէ ներշնչեալ գեղեցիկ դործերով կ'ստացուի. ուստի առիթը ձեռքէ փախցնելու չեն, յիշելով միանգամայն թէ՝ բաղդին անիւր միշտ միօրինակի չի գառնար, եւ թերեւս օր մը իրենք ալ կարուտին այդ գթութեան յարկին խնամոցը, եւ խիղճն օր անաշոռ դատաւոր մ'է, յայնժամ տանջէ զիրենք, ժամանակաւ այդ Սրբազն յարկը իրենց մտքն անցուցած չըլալնուն համար :



### ՏԱԽՏԱԿ ՄՐԲԵԼՈՒ ԽԵՆԹ ՄԸ

Դժբաղդաբար ստուգուած է թէ չափազանց մաքրասովութիւնն ալ տեսակ մը խենթութիւն է, որոյ մէկ օրինակն ալ է հետեւալլ.

Անցեալ շաբթուան փշած սաստկաշունչ ցուրտին, Գումագաբուցի բանտէին մը տախտակ սրբելու կելնէ, և տախտակներուն խոհաւութիւն չորցնելու համար սենեկին պատուհանները կը բանայ ու չորս ամսուան մանկիկը բազմոցին վրայ ձգելէ ետքը, միւս սենեակները սրահները և ամողուղը շփել ու որբելով մէկ քանի ժամեր կ'զբաղէ, այն միջոցին խեղճ մանկիկն ալ ցըտէն կը սառի :

Տիկինը իւր այս տանտկնութիւնը լմնցնելէ ետքը կը միշէ իւր զաւակը, զոր գիտկնացեալ գտնելով ինքն ալ փայտ կը կտրի և կսկսի պոռաւ կանչել, բայց ի զուր, զի խեղճ մանկիկը ցըտէն մեռած էր. ուստի գլուխը ծեծե

լով գոռում գոչումը կը սաստկացնէ, դրացիք վրայ համելով՝ դժուարաւ զինքը կը հանդարտեցնեն խենթութիւնը երեսին տալով:

Բոժ. — Խենթը դաշնուշ չունենար, ըսոյները, հարկաւ բան մը դիտէին:



Փիլիսոփայի մը հարցուցին թէ՝ կնոջմէ մը աւելի շատախօս կը ճանշնա՞ր:

— Այո՛, պատասխանեց, մէկ տեղ եկող երկու կիներ:

## ԶԲՈՍԱՆՔ

### ԾԱՄԿԱԳՅՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱԿ ՄՐ

Երկու անձինք թող ապահով ըլլան թէ տռանց ուրիշէ մը կարդացուելու, կրնան իրարու հետ թղթակցիւ հետևեալ կերպով.

1	2	3
1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5
զ բ դ ե թ	ն լ փ կ ե	մ դ դ դ է
4	5	6
1 2 3 4 5	1 2 3 4 5	1 2 3 4 5
զ բ դ ե թ	կ թ հ մ ժ	մ ձ ժ ե ն
7	8	
1 2 3 4 5	1 2 3 4 5	
չ յ պ ց ո	լ փ ւ ք ե	

Օրինակ.

(Առաւօտ և երեկոյ) բառերը գրելու համար պէտք  
է նշանակել

$\frac{4}{1}$	$\frac{6}{5}$	$\frac{4}{1}$	$\frac{8}{3}$	$\frac{4}{3}$	$\frac{3}{1}$	$\frac{8}{5}$	$\frac{1}{4}$	$\frac{4}{2}$	$\frac{1}{4}$	$\frac{5}{1}$	$\frac{7}{5}$	$\frac{7}{2}$
---------------	---------------	---------------	---------------	---------------	---------------	---------------	---------------	---------------	---------------	---------------	---------------	---------------

Բացատրութիւն. — Որովհետեւ (ա) ը կրդ կարգի  
առաջին գիրն է, (ա) Երդ կարգի 5րդ գիրն. (ւ) 8րդ կար-  
գի 3րդ գիրն է, ևայլն:

Այս բանալին օրինակ մ'է, երկու ընկերք պարախն  
իրենց պատրաստելիք բանալին մէջ կարգերը և կամ գը-  
րերը տեղափոխել, անկասկած լինելով թէ իրեցմէ զատ  
ուրիշ մը չպիտի կարենայ հասկնալ. իսկ եթէ ընկեր մը  
անուշադրութեամբ իր բանալին կորոնցնէ, անմիջապէս ըն-  
կերո՞ջը իմացնելով ուրիշ բանալի մը պատրաստելու հն  
կարգերն ու գրերը տեղափոխեալ, որպէս զի յետ այնօր-  
իկ գրեցիք նամակներնին ալ ըստ առաջնորդ մինակ իրենիք  
հասկնան:

---

Մուրացիկ մը, որ իւր արուեստին մէջ շատ ճարապիկ  
էր, հարուստ կծծիի մը կը մօտենայ, ողորմութիւն ուզե-  
լու համար.

— Ողորմեցէ՞ք, տէր իմ, կըսէ, այնպիսի աղքատի մը,  
որ աշխարհի չորս մասերը պտտած է, և մինչեւ իսկ աւե-  
լի հեռուն գացած է:

— Աւելի հեռուն մի՛. ո՞ւր կընայ ըլլալ:

— Դժոխք անդամ գացի:

— Դժո՞խք, կը կրկնէ կծծին, կը փափաքէի գիտնալ  
թէ ի՞նչ տեսար հոն,

— Հոն տեսայ անգութ հարուստներ, անոր ասոր ըս-  
տակին վրայ նստելով հարստացող սառաթներ, անխիղճ  
վաշխառուներ, կծծի ունեւորներ:

— Ըստ է որ նստելու տեղ չի կայ.

— Ոչ պարոն, թիկնաթոռ մը պարապ տեսայ, որ ձե-  
զի կ'սպասեր:

# ԶՈՒՄԲՇԱԾԼԻՔ

## ԵՐԿՈՒ ԱԿՆՅԻՔ

Ի ՃԱՇԱՐԱՆՆ ԱՅՆԱԼՃԻ

(Շաբաթակելք)

— Եօ՛, մընչուկ, պիղ սանա տէտիւք քի հոռոմճատան  
մուխու ֆ տէկիւլիք, տօզրու իփատէ էթսէ՞նէ,

— Ետ'նիմ, սոյլէտիք իսթէ, հէփսի եփոմի կոռու,

— Տէ՛ր, մի գարձուցաներ զերեսս քոյ յինէն, զէօրէ  
հըմայէկս մեղքը տի մանիմ վէ գժօխոց արժանանամ :  
Կօդո՞զ պէ՛կ, աս կաթնավերները էնճամիւլ քէլտամ մեր  
քնթէն կու խունդան տէջէ էսրար կանիմ իսէ տը՝ բամման-  
քըդ ա'սլա սէմմ ու իթիպար չիս աներ. տեսա՞ր մի կերած  
ապիւրը, քուսան զըուչէն գուռու կու բանայ :

— Էփէ՞նտըմ կուզէ նը քառսունէն բանայ, ո՞վ տի տայ  
ուր ով առնէ, ասօր ալ խալթ է արեր՝ վաշն ալ, պիր  
թամամ չիտի տանք ա՛, հէլպէթտէ բազարլըի տ'անինք  
վէ պօչէն տի կյրինք : Էյ, ծօ մը՞նչուկ, օլաճաղընը սէօլէ.  
— Օլաճաղի օլմայածաղի եօդ, պուռտա պիռ լագիուտի  
եփոմի կոռու :

— Ի՞նչ խալթ կանիս ծօ՛, հիսապնտա սէհփէյաթ. վար.

— Եօդ, պուրտա ֆիյաթ պիռ տիր, բազարլըդ օլմազ :

— Ֆիյաթ տէմէյօրսում, հիսապնտա կալաթ վար.

— Օյլէ եա՛, պուրտա կալաթա տըր, բազարլիք օլմազ :

— Վայ ճիտդ առկդ մունայ, կու հայի՞ս մի աղա, մենք  
կալաթ կասինք ան կալաթա կու հասկնայ, պահ մի ա-  
ռաջ թիւրքէն բարով թէլէֆփիւզ կանէր, հըմայէկո չի  
հասկնալու կու զարնէ :

- Ճիվերս ի վար, կուզի հասկնայ կուզի չհասկնայ, մըն-  
չուկ, սէնին հիսապնտա եաննըլըդ վար:
- Նի՞ցին պիր հասլամա տէօռթ կուռուս, իքի եքսի-  
լի սէքիզ զուռուս, պիր սօթօֆաթօ իւց կուռս . . .
- Հա՛հ, կօյնէ՛, կօյնէ՛, կէօրտի՛ւն մի, պիզ սօթօֆա-  
թօս եէմէկի ետի՞ւք մի .
- Եօդ սօթօֆաթօս, ըսթօֆաթօ, եանի գիզարթմալի .
- Խա՛յը էֆէնտըմ, պիզ գզարթմալը եօհնի եէմէ-  
տիւք :
- Գայմէնի, նա՞սին լագիուտի աննատածայիզ :
- Էֆէնտըմ, սատանութաննուն տէրէճէն կու տեսնա՞ս,  
եէմէքներուն անիւնը պիլէ փոխեր ին ուր՝ նազլու ծա-  
խին, աս իշ տուպառածի բաներ եին:
- Ըմակս է, անճախ, համրերութին պէտք է :
- Բայց առեմ և ոչ առնիմ, էֆէնտըմ, համրերութին  
ըսածդ ալ տէրէճէ մի ունի . թավուխ բազարըի բաչապը-  
երսին լոդմանթան վատծուն բարայով - պայվականապէս  
էրկու չէշխա եէմէք ուտելէս սըղրա՝ մարդը թէվազուեօվ  
թէշէքքիւր մին ալ պէյան կանէ վէ բէշտէմալին պօջը կու-  
տայ ուր՝ քինթս բերանս սրբիմ: Ե աս արիւն բերան մար-  
դոց լոդմանթան ալ էրկու չէշխա կերանք. թապախը քառ-  
սուն բարայէն գիիր՝ չորս կընէ , չորս խատէֆ գինին ալ  
տասնական բարայէն քառսուն բարայ՝ եղաւ հինգ, քառ-  
սուն բարայի ալ հաց կերանք՝ ճէման եէքիւն վեցնոց. մէ-  
ճիտիյէին վրան թող բերէ առնէ:
- Մընչուկ, 14 զըուշ կէթիւր, մէժտիյէի ա՛լ:
- Նա՞սիլ օն տէօռթ, եիրմի կուռուս օլածագ, պուրտա  
բազարլիք եօդ տէտիք:
- Կօզմօզ պէկ, հըմայէկս սա իսկէմլին դխլուն տի զար-  
նիմ, օլան սէն պիզի մայթապա՞մը չըդտուն, իքի թապագ  
եէմէք իշիւն նէ՞ հիսապլա եիրմի իստէեօրսըն:

— Պրէ գարտաս, պիր հասլամա 4 կոռւս, իքի էքսիլի 8 կոռւս, պիր գիզարթմա 3 կոռւս, տէօրթ սառանպ 4 կոռւս, իքի բարցա էքմէք 1 կոռւռուս, հէփսի 20 կոռւռուս:


— Եւ ողորմեա քոյ արարածոց և ինձ բազմամեղիս, վէսէլամ։ տեսա՞ր մի աղա, ըրաւ չըրաւ՝ զարաճումէին եէքիւնը քուանի պալիդ արաւ։

— Միամիտ եզիր, էփէնարմ, կուզէ նը՝ 40ի պալիդ անէ, ո՞վ տի տայ ուր ով առնէ։

Սպասաւորը համոզուելով որ պահանջեալ գումարը չպիտի կարենայ գանձել, գնաց վերատեսչին իմացուց։

— Կողմօզ պէկ, զաննս աս հէրիֆները մեղ սոյդունի ախ տան։ անճառի, մեղաւորս ալ վեցնոցին վրայ էսրար տանիմ վէ հապաէ մի էլէլ չի տի տամ։

Այս միջոցին վերատեսուչը ասոնց մօտենալով՝ 20 դահեկանը պահանջեց։ Կողմօզ և Տաքէս էմմիք ի զուր պոռշտելէ ետքը ներկայ դանուող մի քանի յաճախորդաց համոզմամբը քսան դահեկանը շատ գժուարաւ վճարեցին և մեկնեցան, ուխտելով ուրիշ անդամ Ղալաթիոյ կողմը չանցնիլ միանգամայն որոշեցին իրենց ծանօթ հայրենակցաց յորդոր կարդալ որ եթէ օր մը Ղալաթիոյ կողմը անցնին, անզգուշութեամբ հաշարան մը չի մտնեն, ուր վաճառուած կերակուրք թափուխ բազարը բաչապըելիսին լոգմանթային կերակուրներուն չեն նմանիր։



Շուկային մէջ երկու ջրավաճառք։

— Մարգար ախպար, հիմակու տէլիսանլուներուն շատը վէրէմի՞ են ի՞նչ են, չի հասկցայ դնաց։

— Ինչո՞ւ վէրէմի՞ ըլլամն, վրանին բարի։

— Հասպա ջուր խմած ատեննին հապ կը կլեն կոր։

— Հասկցայ։ անոնք ալաֆրանկայի սափուշ եղողները ըլլալու են, քի օր մը պիւսպիւթին հապը պիտի կըլլեն։